ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.9. Թուրքիայի տնտեսությունը

• • •

Նպաստավոր բնակլիմայական պայմանները Փոքր Ասիա թափանցած թուրք քոչվորներին հնարավորություն տվեցին որպես տնտեսության հիմք երկար ժամանակ պահպանել անասնապահությունը: Նրանք աստիճանաբար յուրացրին հողագործությունը, որով վաղուց ի վեր զբաղվում էին հայերը, հույները և մյուս տեղաբնիկները: Այդպես հայերից բազմաթիվ երկրագործական (գութան, արոր, ակոս և այլն) և հույներից գիտական եզրույթներ ներառվեցին թուրքերեն գրական լեզու:

Արդյունաբերությունը բազմաճյուղ է և գրեթե ամբողջությամբ գտնվում է պետական սեկտորի ձեռքին՝ էներգետիկան, հանքարդյունաբերությունը, մետաղաձուլությունը, նավթավերամշակումը: Խրախուսվում է նաև մասնավոր սեկտորը: Երկար ժամանակ դանդաղ էր զարգանում ***էներգետիկան***, բայց վերջին տարիներին նավթի ու բնական գազի ներմուծման ծավալների մեծացման շնորհիվ ճյուղում զգալի առաջընթաց կա: Էլեկտրաէներգիայի մեծ մասը արտադրում են ջէկ-երը, մեծանում է նաև ջրէկ-ների բաժինը: Դրանց մեջ առանձնանում է Քեբանի ջրէկ-ը Եփրատի վրա: Իսկ համանուն ջրամբարը հնարավորություն է տալիս ոռոգելու 1,6 մլն. հա. հողատարածք:

Ամենաարագ զարգացող ճյուղերից է ***մեքենաշինությունը***, որի առաջատար ենթաճյուղերն են գյուղատնտեսականը, տրանսպորտայինը և էլեկտրատեխնիկականը: Այն թողարկում է բազմատեսակ արտադրանք՝ ավտոմեքենաներ, տրակտորներ, էլեկտրաքարշեր, երկաթուղային վագոններ, մետաղահատ հաստոցներ, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային արտադրանք:

Քիմիական արդյունաբերության հարուստ հումքային բազան նպաստել է հանքային պարարտանյութերի, կենցաղային քիմիայի, ավտոդողերի, պլաստմասսայի, սինթետիկ մանրաթելերի արտադրությանը: Ավանդական զարգացած ճյուղեր են ***թեթև*** (հատկապես տեքստիլ) և ***սննդի արդյունաբերությունը:*** Այս ճյուղերը մասնագիտացել են բրդյա և բամբակյա գործ-

վածքների, կաշվի և կաշվե հագուստի, գորգերի, պահածոների, շաքարի, ծխախոտի, կաթնանասնապահական մթերքների արտադրության գծով:

• • •

Հողատիրության համակարգում դեռ պահպանվում են ավատատիրության մնացուկները, հատկապես երկրի արևելքում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում:

Ագրարային բարեփոխումների շնորհիվ թուրքական գյուղ հաստատապես մուտք են գործել տրակտորը և այլ ագրոտեխնիկա, մեծացել է հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը: Այլ կերպ ասած, գյուղատնտեսության մեջ բավականին բարձրացել է մեքենայացման ու քիմիացման աստիճանը, որն էլ նպաստել է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմանը: Ներկայումս մշակվում է Թուրքիայի տարածքի ավելի քան 1/3-ը (29 մլն հա): Հացահատիկային մշակաբույսերի մեջ կարևոր են ցորենը, գարին, եգիպտացորենը, բրինձը, տեխնիկական մշակաբույսերից՝ բամբակենին, ծխախոտը, շաքարի ճակնդեղը, արևածաղիկը: Սև ծովի ափերին մշակում են նաև թեյ:

• • •

Թուրքիան տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ ունի հաղորդակցության ուղիների խիտ ցանց: Բայց երկրի ներքին և արևելյան շրջաններում տրանսպորտային ցանցը նոսր է: Երկաթգծերն ու ավտոճանապարհները իրար են կապում ոչ միայն երկրի խոշոր տնտեսական կենտրոնները և ելք ունեն դեպի գլխավոր նավահանգիստներ՝ **Ստամբուլ**, **Իզմիր**, **Մերսին**, **Սամսուն**, **Իսքենդերուն**, այլև կատարում են մեծ ծավալի միջազգային բեռնափոխադրումներ: Վերջինս նաև ՆԱՏՕ-ի ռազմածովային բազան է: Քարտեզի վրա գտեք այդ նավահանգիստները և նշեք, թե ո՞ր ծովերի ափերին են դրանք գտնվում:

• • •

Ինդուստրիալ-ագրարային Արևմուտքը գրավում է Թուրքիայի տարածքի 1/4-ը, որտեղ ապրում է նրա բնակչության 2/5-ը, այն մատակարարում է արդյունաբերական արտադրանքի 7/10-ը: Սա Թուրքիայի առավել զարգացած մասն է, նրա արդյունաբերական միջուկը: Բնակլիմայական պայմանները և ռեսուրսները նպաստավոր են մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար:

Վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է դարձվում արդյունաբերության նորագույն ճյուղերին, հատկապես էլեկտրոնային մեքենաշինությանը: Դրանք տեղաբաշխված են **Ստամբուլում**, **Իզմիրում**, **Էսքիշեհիրում**: Շրջանում են կենտրոնացած երկրի ցանքատարածությունների 1/3-ը, բայց ստացվում է արևածաղկի, ծխախոտի, բամբակենու, շաքարի ճակնդեղի բերքի մեծ մասը, հացահատիկի արտադրանքի 1/3-ը: Այստեղ է խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի 1/3-ը:

Ոչ միայն շրջանի, այլև ամբողջ Թուրքիայի ամենամեծ քաղաքը **Ստամբուլն** է՝ 12 մլն-ից ավելի բնակիչ: Դա պատմական Բյուզանդիոնն է, IV դարից կոչվում է Կոստանդնուպոլիս, 1923 թ-ից՝ Ստամբուլ: Այն տարբեր ժամանակներում եղել է Հռոմեական, Բյուզանդական, Օսմանյան կայսրության, ապա և Թուրքիայի Հանրապետության մայրաքաղաք: Տարբեր դարաշրջանների քրիստոնեական բազմաթիվ կառույցներ, այդ թվում Սրբ. Սոֆիայի տաճարը, թուրքերը վերածել են մզկիթների:

Էգեյան ծովի ափին է գտնվում զարգացած արևմուտքի երկրորդ խոշոր քաղաքը՝ Իզմիրը (պատմական Զմյուռնիան՝ հիմնվել է Ք ա X դ.) 2 մլն բնակչությամբ:

Ագրարային-ինդուստրիալ Կենտրոնը զբաղեցնում է երկրի տարածքի 40%-ից ավելին, որտեղ ապրում է երկրի բնակչության նույնքան մասը, բայց մատակարարում է արդյունաբերական արտադրանքի 20%-ը, բամբակի, ձիթապտղի, ցորենի, ցիտրուսների բերքի 50-80%-ը: Գյուղատնտեսության մեջ տիրապետում է ապրանքային արտադրությունը: Շրջանի հարավային քաղաքները Ադանա, Իսքենդերուն, Անթալիա աչքի են ընկնում տեքստիլ արդյունաբերությամբ, սև մետաղաձուլությամբ և հյուրընկալության ինդուստրիայով: Զարգացած է զբոսաշրջությունը: Շրջանի ամենամեծ քաղաքը մայրաքաղաք Անկարան է (5 մլն բնակիչ), որը հույները հիմնել են Ք. ա. VII դարում: Այն արդյունաբերական և մշակութային կենտրոն է, երկաթուղային և ավտոմոբիլային հանգույց Անատոլական կամ Փոքրասիական սարահարթի կենտրոնում: Կիլիկիայի (այժմ՝ Չուքուրովա) դաշտավայրի Ադանա քաղաքը մեծ ողբերգություն ապրեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Հիշե՛ք, ի՞նչ երգեր են նվիրված Ադանային, Մուշին, Վանին, Սասունին և հայաշատ մյուս բնակավայրերին:

Ագրարային Արևելքը զբաղեցնում է երկրի տարածքի մոտ 1/3-ը, բայց ապրում է բնակչության 1/5-ը և մատակարարում արդյունաբերական արտադրանքի սոսկ 10%-ը: Այն մնում է հյութալի արոտավայրերով հայտնի և անասնապահության զարգացման մեծ հնարավորություններ ունեցող տարածք: Սա Թուրքիայի ամենանոսրաբնակ շրջանն է, բայց աչքի է ընկնում բնակչության ազգային կազմի խայտաբղետությամբ:

• • •

Ավանդական ճյուղերի հետ մեկտեղ առաջանցիկ տեմպերով զարգանում են նաև ժամանակակից բարձր տեխնոլոգիաներով աշխատող ճյուղերը և արտադրությունները: Աճել է Թուրքիայի տեսակարար կշիռը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ՝ համաշխարհային տնտեսության մեջ:

• • •

Թուրքիան ունի ***արտաքին տնտեսական կապերի*** լայն աշխարհագրություն: Հիմնականում կողմնորոշված է դեպի Արևմուտք, հատկապես Եվրամիության անդամ երկրներ և ԱՄՆ: Բայց վերջին 2–3 տասնամյակներին տնտեսական կապերը խիստ աշխուժացել են Ադրբեջանի և կենտրոնաասիական թուրքալեզու հանրապետությունների հետ: Թուրքիան շարունակում է մանևրել և դեռ դիվանագիտական հարաբերություններ չունի ՀՀ հետ ու փակ է պահում հայ–թուրքական սահմանը:

• • •

Արևելյան **իլերի** մեծ մասում տիրապետող են քրդերը, ապրում են նաև թուրքեր, Իրանի և Սիրիայի սահմանամերձ մասերում՝ արաբներ, արևելյան սևծովյան շրջանում՝ լազեր: Վերջերս պարզվել է, որ Ճորոխի ավազանում ապրող մոտ 1,5 մլն մարդ դավանելով իսլամ, իրենց հայ են համարում: Այդպիսիք կան նաև Թուրքիայի այլ շրջաններում:

Արևմտյան Հայաստան այցելած յուրաքանչյուր հայ զբոսաշրջիկ Կարսում, Վանում, Մուշում, Էրզրումում (Կարին), Մալաթիայում և երբեմնի հայաշատ մյուս քաղաքներում նկատել է, որ տեղացիների հետ շփման ժամանակ շատ են հանդիպել թախծոտ հայացքով մարդկանց, որոնք շատ մեծ ցանկություն են ունեցել զրուցել, խոսել իրենց հետ, բայց լեզուն չեն իմացել: Դրանք Մեծ եղեռնից փրկված, դավանափոխված և երկար ժամանակ իրենց ազգությունը թաքցրած հայերի սերունդներն են:

• • •

Իր տեսակարար կշռով զիջում է արդյունաբերությանը, բայց այն բազմաճյուղ է և գլխավոր գյուղմթերքների գծով բավարարում է երկրի պահանջարկը, իսկ որոշ արտադրատեսակներ արտահանվում են:

• • •

Մոհայրի արտադրությամբ և արտահանմամբ Թուրքիան հավասարը չունի աշխարհում: Կարևոր նշանակություն ունեն նաև ոչխարաբուծությունն ու թռչնաբուծությունը, լեռնային շրջաններում՝ մեղվաբուծությունը: Ոչխարների և այծերի գլխաքանակով Թուրքիան աշխարհի առաջատար երկրներից է:

• • •

Ծառայությունների ոլորտը վերջին տասնամյակներում դրական տեղաշարժեր է արձանագրել հատկապես բնակչության ռեկրեացիոն սպասարկման, տրանսպորտային, կապի, տեխնիկայի, վարձույթի, գովազդային, բանկային, հյուրանոցային և այլ ծառայությունների առումով:

• • •

Գիտե՞ս. որ...

Այստեղ է հիմնադրվել արևմտահայ դասական թատրոնը, որտեղ խաղացել են Վահրամ Փափազյանը, Պետրոս Ադամյանը: Փորագրիչ Վահրամ Մյուհենտիսյանը թուրքերեն տպագրական տառերի ստեղծողն է: Տիգրան Չուխաջյանը ոչ միայն հայկական առաջին օպերայի, այլև թուրքական օպերետի հիմնադիրն է: Հակոբ Մարթայանը եղել է թուրքական առաջին հանրագիտարանի գլխավոր խմբագիրը, թուրքերեն նոր՝ լատինատառ լեզվի հիմնադիրը: